ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՄ
(ԱԻ)
1913Թ. ՆԵՋԴՈՒՄ ՕՍՄԱՆՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՈՒԼԱՑՈՒՄԸ. ՆՈՐԱՀԱՅՏ ՆՅՈՒԹԵՐ

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Արաբական թերակղզում տեղի ունեցող գործընթացները, կարևոր նշանակություն ունեցան այդ տարածաշրջանում անկախ պետությունների վերջնական ձևավորման վրա:

Սույն հաղորդման առարկան հանդիսանում է ակադեմիկոս Մ. Ներսիսյանի արխիվում տեղ գտած Ցարական Ռուսաստանի դիվանագիտական նամակագրության լույսի ներքո Բասրայի հայտնի խոշոր ֆեոդալ, 1908թ. և 1912թ. Օսմանյան խորհրդարանի պատգամավոր՝ Սայիդ Թսղիբ ալ-Նաքիբի, 1913թ. աշնանը Նեջդ կատարած այցի և էմիր Աբդ ալ-Ազիզ իբն Սաուդի հետ հանդիպման մանրամասներին անդրադարձը[1]:

Չնայած այն հանգամանքին, որ իբն Սաուդին հաջողվեց կարճ ժամանակաշրջանում հաստատել իր իշխանությունը Նեջդում և նույնիսկ լուրջ հաջողություններ հասնել 1902-1906թթ. իր հիմնական թշնամի Շամմարի իշխաններ՝ Ռաշիդների (թուրքական իշխանությունների հիմնական դաշնակիցներ) հետ կռիվների ընթացքում, այսուամենայնիվ, կրկին հզորացող Սաուդական իշխանությունը շարունակում էր գտնվել ներքին և արտաքին ոչ բարենպաստ իրավիճակում[2]:

Օսմանյան կառավարության և Նեջդի հարաբերությունները գնալով ավելի էին լարվում, առաջինը շարունակելով Աբդուլ Համիդի քաղաքականությունն ամեն կերպ ջանում էր թուլացնել և ոչնչացնել վահհաբիների իշխանությունը Նեջդում: Չնայած նրան որ վտանգը իբն Ռաշիդների կողմից գնալով թուլանում էր, սակայն ավելի ակտիվանում էր Մեքքայի շերիֆ Հուսեյնի գործողությունները ուղղված Նեջդի դեմ, որոնք հաճախակի ուղեկցվում էին ռազմական ընդհարումներով, վերածելով Հիջազը Սաուդական իշխանության հիմնական թշնամու:

Գտնվելով ռազմա-քաղաքական և տնտեսական շրջափակման մեջ վահհաբական իշխանության միակ «դաշնակիցը» մնում էր Քուվեյթը: Սակայն սաուդու-քուվեյթական հարաբերություններում ևս առկա էին բազմաթիվ տարաձայնություններ: Անհամաձայնություններն առաջանում էին հիմնականում տեղային նշանակության խնդիրների շուրջ: Քուվեյթի շեյխ Մուբարաքը ամեն կերպ ցանկանում էր, ուժեղացնել իր ազդեցությունը Սաուդական իշխանությունում և պարտադրել Աբդ ալ-Ազիզին իր կամքը: Իբն Սաուդը ստիպված հանդուրժում էր Մուբարաքի այս դիրքորոշումը ցանկանալով պահպանել «բարեկամական» հարաբերերությունները վերջինիս հետ, քանի որ Քուվեյթը և նրա նավահանգիստը Սաուդական իշխանության համար մնում էր հիմնական պատուհանը դեպի արտաքին աշխարհ[3]:

Ստեղծված իրադրության պայմաններում, փորձելով ելք գտնել քաղաքական և տնետեսական շրջափակումից, իբն Սաուդը դիմեց վճռական քայլերի: 1913թ. ապրիլի 18-ին Աբդ ալ-ազիզ իբն Սաուդը պաշարեց և մեկ օր անց տեղի բնակչության օգնությամբ ապրիլի 19-ին գրավեց ալ-Հուֆուֆը: Ապրիլի 20-ին սաուդական զորքերը առանց որևէ դիմադրության նվաճեցին նաև ալ-Քաթիֆը և ի վերջո ողջ ալ-Հասայի սանջակը անցավ վահաբական իշխանությանը[4]:

Թուրքական իշխանությունները ալ-Հասան կորցնելուց հետո ոչ մի լուրջ քայլ չձեռնարկեցին այն վերադարձնելու ուղղությամբ: Իշխանական շրջաններում քննարկվում էր ալ-Հասա ուղարկել 13-րդ բանակային կորպուսը, որի թվաքանակը հասնում էր 8-9 հազարի, սակայն, ինչպես նշում է ռուս դիվանագետը Մ. Պապովը, նման քայլը կնաշանակեր գրեթե լիովին դատարկել Բաղդադի և Բասրայի վիլայեթները, ինչը շատ վտանգավոր կարող էր լինել ստեղծված իրադրության պայմաններում: Բացի այդ իբն Սաուդը, որն արդեն մի քանի ամիս է ինչ գրավել է ալ-Հասան կարողացել է հիմնովին ամրապնդվել և հավաքագրել բավական մեծ քանակությամբ զորք[5]: Ինչ վերաբերում է ծովային արշավանքին, ապա Անգլիան, որը մեծ ուշադրությամբ հետևում էր Կենտրոնական Արաբիայի իրադարձություններին, և չցանկանալով թույլ տալ թուրքական կայազորի վերահաստատումը ալ-Հասայում, տարբեր խոչընդոտներ էր ստեղծում, իրադարձությունների նման ընթացքը կանխելու համար:

Երիտթուրքերը հասկանալով, որ ստեղծված իրավիճակում հնարավոր չէ ռազմական ճանապարհով հարցին լուծում տալ, վերջնականապես հրաժարվեցին այդ մտքից և սկսեցին փորձեր կատարել բանակցությունների միջոցով համաձայնության գալ իբն Սաուդի հետ, առաջարկելով սանջակի ներքին գործերում լիակատար անկախություն և մութասարիֆի պաշտոնը, միայն թե նա ճանաչի Թուրքիայի գերիշխանությունը ու համաձայնվի սաուդական խոշոր քաղաքներում թուրքական կայազորների տեղակայմանը[6]:

Բանակցությունների անցկացման համար Օսմանյան կառավարությունը Նեջդ ուղարկեց Թալիբ Նաքիբին[7]: Թալիբ փաշայի հետ մեկնեցին ալ-Հասայի նահանգապետ Սեմի բեյը, որը արդեն մեկ տարի է գտնվում էր Բասրայում, Բաղդադի ռազմական շրջանի շտաբի պետ Բեհաղին բեյը ինչպես նաև մի քանի սպաներ ու պաշտոնյաներ[8]:

Հանդիպումը տեղի ունեցավ Քուվեյթից հարավ գտնվող Սուբեհիյա շրջանում: Հետաքրքրական է, որ, ինչպես հայտնում են ռուսական դիվանագիտական աղբյուրները Սայիդ Թալիբի առաքելությունը, և նրա ու Աբդ ալ-Ազիզի հանդիպումը պահվում էին խիստ գաղտնի, նույնիսկ Բասրայի անգլիայի հյուպատոսը, որը գտնվում էր Սայիդ Թալիբի հետ բարեկամական հարաբերություններում, տեղեկացված չէր այդ հանդիպման և նրա ընթացքի մասին[9]:

Ինչպես հայտնում է Բասրայի ռուսական հյուպատոս՝ Գոլինիշև-Կուտուզովը, Սայիդ Թաղիբի երկշաբաթյա ուռաքելությունն ավարտվեց անհաջող: Իբն Սաուդը հրաժարվել էր թուրքական մութասարիֆի պաշտոնից հայտարարելով, որ ինքը Նեջդի թագաժառանգն է և չի կարող լինել թուրքական կառավարիչ: Աբդ ալ-Ազիզը բացառել էր նաև թուրքական կայազորների տեղակայման հնարավորությունը, միակ զիջմանը, որին նա պատրաստ էր գնալ, դա համաձայնվել օսմանյան կառավարության կողմից նշանակված կադիի ներկայությանը ալ-Հասայում և ամենամյա տուրքերի վճարմանը:

Թալիբ փաշան Բասրա վերադառնալուց անմիջապես հետո հանդիպեց Բասրայի նահանգապետի հետ, որին ներկայացրեց ալ-Հասայում գործերի ընթացքի մասին: Նրա կարծիքով Օսմանյան կառավարությունը պետք է հրաժարվի ալ-Հասան ռազմական ուժով վերադարձնելու մտքից և Ստամբուլի համար լավագույն ելքը կլինի հաշտվել սանջակի կորստի փաստի հետ և Աբդ ալ-Ազիզին առաջարկել

Նեջդի և ալ-Հասայի գեներալ-նահանգապետի պաշտոնը լիակատար ինքնավարության պայմանով:

Սկզբնական շրջանում իբն Սաուդը, որը չէր ցանկանում ոչ մի տեսակի հարաբերություններ ունենալ թուրքերի հետ, այժմ գնաց որոշ զիջումների: 1914թ. մայիսի 29-ին երկու կողմերը եկան համաձայնության[10]: Իբն Սաուդը ընդունեց գեներալ-նահանգապետի պաշտոնը, դրանով իսկ ճանաչելով Թուրքիայի գերիշխանությունը, սակայն Նեջդի Օսմանյան կայսրության կազմում մնալը կրում էր միայն և միայն ձևական բնույթ[11]:

Այսպիսով, առաջին աշխարհամարտի նախօրեին Օսմանյան կայսրության դիրքերը այնքան էին թուլացել Կենտրոնական Արաբիայում, որ տեղի առանձին էմիրները նույնիսկ գտնվելով Թուրքիայից կախվածության մեջ ընդհանրապես հաշվի չէին նստում կենտրոնական իշխանությունների հետ, ռազմական գործողություններ են ծավալում, դաշինքներ և համաձայնագրեր են կնքում, ինչպես իրար, այնպես էլ օտար երկրների հետ, չնայած այն փաստին, որ նրանք մտնում են կայսրության կազմի մեջ:

ARAM GASPARYAN
(IOS)

THE WEAKENING OF OTTOMAN AUTHORITIES IN NAJD IN 1913: NEW DOCUMENTS

After consolidating his domain Abdul Aziz ibn Abdul Rahman Al-Saud captured the Hasa sanjak in 1913. Al-Saud's success greatly depended on weakening of Ottoman government. That is why the Turkish authorities preferred to negotiate. In autumn 1913 the negotiations with Al- Saud began Said Talib Al-Nakib. As a result ibn Saud accepted the post of general-governor of Najd and Hasa.

Although Al-Saud recognized the domination of Ottoman authority, the dependence on Istanbul was too formal. Ibn Saud was sovereign Emir that had full independence in internal and foreign affairs.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Philby J. B., Arabia, London, 1930, p. 231.
2. МИД Императорское Российское консульство в Бассоре 8-го июня 1913г., Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի հավաքած՝ արխիվային նյութեր, հատոր V, համար 420, (ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արխիվ): Васильев А.М., История Саудовской Аравии, с. 231-245, М., 1982.

3. Ժամանակ առ ժամանակ Մուբարաքը արգելում էր նաև բուվեյթի առևտրականներին և սառոաֆիներին իբն Սաուդին տրամադրել վարկեր: Котлов Л., Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914гг., М., 1986, с. 96.
4. Ալ-Հուֆուֆը գրավելուց հետո թուրքական զորքերը ալինաթաուփվեցին և մութասաուոիֆի ու այլ թուրք պաշտոնյաների հետ միասին վտարվեցին քաղաքից: Պատստսպարվելով Ուջեյրում՝ ալ-Հասայի գլխավոր նավահանգստում, որտեղ էին նաև ալ-Քասիֆի կայազորը վերջիններս փորձեցին կենարոնասցնել իրենց ուժերը և հակահարված տալ Իբն Սաուդին, սակայն դա նրաց չհաջողվեց: Ուջեյրում գտնվող բոլոր փաիստականները մոտավորապես 700 հոգի Իբն Սաուդի միջնորդությամբ տեղափոխվեցին Բահրեյն, այնուհետև Բասրա: МИД Российское Императорское генеральное консульство в Месопотамии, Багдад 8-го июня 1913г., Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի հավաքած արխիվային նյութեր, հատոր V, համար 421, (ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արխիվ):
5. МИД Российское Императорское генеральное консульство в Месопотамии, Багдад 8-го июня 1913г., Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի հավաքած արխիվային նյութեր, հատոր V, համար 421, նշվ. արխիվ:
6. МИД Императорское Российское консульство в Бассоре 8-го мая 1914г., Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի հավաքած արխիվային նյութեր, հատոր V, հատոր 450, (ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արխիվ):
7. Թե ինչով էր պայմանավորված Սայիդ Թալիբի ընտրությունը նման պատասխանատու առաքելության համար, դժվար է բացատրել, հիմքեր չկան ենթադրել որ Կառավարությունը հավատում էր Թալիբի լոյալությանը, հնարավոր է, որ երիտթուրքերը փորձում էի օգտագործել Սայիդ Թալիբի և իբն Սաուդի բարեդրացիական հարաբերությունները, մյուս կողմից իշխանությունները փորձում էին նման քայլով ցույց տալ Սայիդ Թալիբին, որ նրանք ներում են վերջինիս նախկին մեղքերը և համագործակցության առաջարկ են անում:
8. МИД Императорское Российское консульство в Бассоре 8-го мая 1914г., Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի հավաքած արխիվային նյութեր, հատոր V, համար 450, նշվ. արխիվ:
9. Նույն տեղում:
10. Котлов Е., նշվ.աշխ. էջ 106:
11. МИД Императорское Российское консульство в Бассоре 16 июня 1914г., Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի հավաքած արխիվային նյութեր, հատոր V, համար 454, (ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արխիվ):